0160893

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N: 1
## N: ՀՀԳՆՋՏՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-11/1-ՍՀՋ-10-01
## ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «15» 12 2015 թ.

«Սևան-Հրազդանյան-Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ս. Հովհաննիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Եսայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 20 հոդված 4 կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Պատվիրատուն հանձնարարում է, և Կատարողը լրացուցիչ մատակարարում է ինտերնետային կապի տրամադրման ծառայությունները 2016 թ. հունվար ամսվա ընթացքում:
2. Պայմանագրի N: 1 հավելվածն ընդունել հետևյալ խմբագրությամբ.

### «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ձեռքբերվող Ծառայության նկարագիր | | | | |
|---|---|---|---|---|
| Չափա-բաժնի N: | Ծառայությունների անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը |
| 1 | Լայնաշերտ, օպտիկամանրաթելային մալուխով ինտերնետային կապ, 3 Մբիթ/վրկ երաշխավորված սիմետրիկ արագությամբ | դրամ/ամիս | 1 | 15000 |
| **Ընդամենը** | | X | X | **15000** |

| ***Ինտերնետային կապի տրամադրման ծառայության մատուցման ժամկետները*** | |
|---|---|
| **սկիզբ** | **ավարտ** |
| փետրվար 2015 թ. | հունվար 2016 թ. |

Սպասարկման ծառայությունները անհրաժեշտ է մատուցել. Ք. Երևան, Ա. Արմենակյան 125 հասցեով»

3. Սույն պայմանագրի 4.1 կետն ընդունել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 180000 (մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը»:

**ԳՆՈՐԴ**

«Սևան-Հրազդանյան-Ջրառ» ՓԲԸ

Տնօրենի պաշտոնակատար

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ.Տ.

**ԱՄԱՏԱՐՈՂ**

«Յուքոմ» ՍՊԸ

Տնօրեն

Հ. ԵՍԱՅԱՆ

Կ.Տ.